այլ կենտրոններում։ Յոյսերն ընկճուեցին անօրինակ հալածանքներով։ Սակայն, չարիքը սրանով չսահմանափակուեց։ Իտալական խոշոր եւ մանր քաղքենիութիւնը, որ մինչ այդ չէր համարձակւում ժողովրդական ազատութիւնների դէմ ելնել, իսկ որոշ դէպքերում նոյնիսկ այդ ազատութիւնների պաշտպան էր կանգնում՝ ահաբեկուեց ընկերային յեղափոխութեան հեռանկարից եւ համակուեց ամենայետադիմական ընկերային–քաղաքական տրամադրութիւններով։ Այս տրամադրութիւններն էին, որ Մուսոլինին մի քանի տարուան ընթացքում զարգացրեց եւ հասունացրեց իր դիկտատուրան Իտալիայում հաստատելու համար։

Ընկերային յեղափոխութիւն եւ ֆաշիստական դիկտատուրա! Կարելի՞ է երեւակայել մի աւելի ահռելի՛ անդունդ առաջադրութեան եւ արդիւնքի միջեւ...

— 1921–ին եւ 1923–ին «Կոմինտերնի» եւ Մոսկուայի գործակալները գործադուրկ եւ կոմունիստ բանուորների միջոցով ընկերային յեղափոխութեան երկու փորձ կատարեցին միջին Գերմանիայում։ Երկու փորձն էլ ճնշուեցին արեան հեղեղների մէջ։ Միմիայն Սաքսոնիայում սպանուած բանուորների թիւը 12,000–ից անցնում էր... Այս փորձերը ձեռնարկելիս բոլշեւիկները յաջողութեան ոչ մի յոյս չունէին. բայց նրանց համար ի՞նչ արժէք ունի մարդկային արիւնը, անգամ եթէ այդ արիւնը բանուորների երակներից է հոսում... Վրդովուած՝ այս վերաբերմունքից՝ գերման կոմունիստների մի հատուած, որ Բայխստակում 17 պատգամաւոր ունէր, Պաուլ Լէվիի գլխաւորութեամբ լքեց «Կոմինտերնը», մերկայացրեց նրա անխղճութիւնը եւ միացաւ Սոցիալ–Դեմոկրատիային։ Բայց եղածն արդէն եղած էր. տասնեակ հազարաւոր բանուորներ անշնչացած էին կամ մատնուած հալածանքների եւ թշուառութեան։ Եւ եթէ չարիքը քաղաքական լուրջ հետեւանքներ չունեցաւ՝ պատճառը զարձեալ ընկերվարականներն էին, որոնք մի մարդու պէս ծառացան գինուորական դիկտատուրայի եւ նման յեղաշրջման ծրագիրների դէմ։

— 1924–ին Բուլգարիան դարձաւ ընկերային յեղափոխութիւնների թատերարեմ։ Այդ ժամանակից ի վեր Բուլգարիան քաղաքական եւ ընկերային յետաշրջման ջղաձգութիւններով է բռնուած։

— Նոյն թուին Մոսկուան եւ իր «Կոմինտերնը» Էստոնիայի ընկերային յեղափոխութիւնը ձեռք առին։ Արդիւնքը եղաւ ամենավատ տեսակի մի գինուորական դիկտատուրա, որ մահապատիժներով, բանտարկութիւններով եւ ֆիզիքական տանջանքներով ջանում է արմատախիլ անել ընկերային յառաջադիմութեան բոլոր տենչերը այդ երբեմնի ժողովրդավար հանրապետութեան մէջ։

— 1926–ին Լիտվանիայի բանուորութեան մի մասը ընկերային յեղափոխութեան գիրկը նետուեց ռուս բոլշեւիկների անմիջական ղեկավարութեամբ։ Հետեւանքը եղաւ պրոֆ. Վոլդեմարսի ֆաշիստական դիկտատուրան, որ անխնայ գնդակահարութիւններով յեղափոխութիւնը ճնշելուց յետոյ՝ հիմա էլ ջանում է ժողովրդավարական կարգերի մնացորդները ոչնչացնել ցարական լծից հաղիւ աչք բացած այդ երկրում։

Մեր խօսքը չերկարացնելու համար, զանց ենք առնում Սպանիայում, Իւգո–Սլաւիայում, Յունաստանում, Լեհաստանում եւ այլ երկիրներում կատարուած ընկերային յեղափոխութեան մանր–մունր փորձերը, որոնք ամէնքն էլ վերջացել են պարտութեամբ՝ տեղի տալով աւել կամ պակաս չափով քաղաքական եւ ընկերային յետաշրջման։ Վերեւ յիշատակուած գլխաւոր դէպքերն էլ բաւական են ընդհանուր եզրակացութիւններ հանելու համար։

Իսկ ի՞նչ կարող են լինել ընդհանուր եզրակացութիւնները եթէ ոչ այն, որ՝

Առաջին՝ բոլշեւիկեան դիպուածը համաշխարհային ընկերային յեղափոխութեան մասին հիմնովին սխալ էր,

Երկրորդ՝ Կատարուած փորձերը սոսկալի զոհեր պատճառելով միջազգային աշխատաւորութեանը՝ իրենց առաջադրած նպատակին միանգամայն հակառակ արդիւնք են տուել՝ ամենուրեք զարկ տալով ֆաշիզմին կամ ֆաշիստական տրամադրութիւններին,

Երրորդ՝ աշխատաւորութեան ազատագրական շարժումը յառաջադիմական ընթացքի մէջ է կամ համեմատաբար կայուն վիճակ